

ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ – Մատենադարան

t.manukayn@matenadaran.am

ՆՈՐԱՀԱՅՏ ՁԵԻԱԲԱՆԱԿԱՆ ԵԶՐԵՐ ԺԷ ԴԱՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ

Քանալի բառեր. *Քերականական եզրեր, ձեռագիր, ձևաբանություն, Ոսկան Երևանցի, տերմինաբանություն*

Քննության համար նախապես ուսումնասիրել ենք Մ. Մաշտոցի անվան Երևանի Մատենադարանի (այսուհետ՝ ՄՄ) և Հռոմի Կազանատենսե գրադարանի (Roma, Biblioteca Casanatense, այսուհետ՝ R. BC) ձեռագրերի ֆոնդերը: Մաշտոցյան Մատենադարանի հարուստ ձեռագրական գանձարանից ընտրել ենք երկու ձեռագիր և մեկ ձեռագիր էլ Հռոմի Կազանատենսե գրադարանի հավաքածուից և ուսումնասիրությունը կատարել ենք վերոհիշյալ երեք ձեռագրի շրջանակներում՝ ՄՄ 2286, 2295, R. BC ms. 1941¹: Ընտրությունը կատարելիս առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքներով. նախ ընտրել ենք այն ձեռագրերը, որոնք պարունակում են քերականական աշխատություններ և թվագրված են ԺԷ դարով, այնուհետև բացառման սկզբունքով առանձնացրել ենք ձևաբանական տերմինների տեսանկյունից չուսումնասիրված, չիրատարակված քերականական բնագրերը, ընտրությունն էլ կատարել ենք արդեն հայտնի լեզվաբանների կողմից ուսումնասիրված քերականական աշխատությունների բացառումով:

Ուսումնասիրության հիմքում ընկած ձեռագրական նյութը գրչագրերից դուրս բերված, խոսքի մասերին վերաբերող քերականական եզրերն են², որոնք ըստ նորահայտության աստիճանի տարանջատում ենք հետևյալ խմբերի՝

Առաջին խմբին են պատկանում այն քերականական եզրերը, որոնք արձանագրված չեն հատկապես տերմինաբանական և առհասարակ լեզվաբանական որևէ բառարանում տերմինային արժեքով, առաջին անգամ են դրվում

¹ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Է, 801–808, 827–830, Catalogo dei manoscritti Armeni delle biblioteche d'Italia, 298–301:

² Տերմինների նորահայտ լինելու հանգամանքը ստուգելու համար առաջնորդվել ենք հետևյալ հրատարակությունների տվյալներով՝ ԼԲ, Մուրադյան Ա., 351–354, ՆՀԲ, հ. Ա, Բ, Հովհաննիսյան Լ., Բարսեղյան Հ., Առաքել Սիւնեցի, 227–229, Եսայի Նչեցի, 193–202, Յովհաննէս Երզնկացի, 371–379, Յովհաննէս Ծործորեցի, 363–374, Յովհաննէս Քոնեցի, 222–226, Ն. Ադոնց, 287–293:

գիտական շրջանառության մեջ, որի համար էլ պայմանականորեն կոչում ենք նորահայտ:

Երկրորդ խմբում միավորվում են քերականական հայտնի եզրերի այլ իմաստով կիրառությունները: Լեզվական միավորների իմաստի փոփոխությունը պատմական երևույթ է, որը հայերենի զարգացման ընթացքում տարբեր դրսևորումներ ունի: Լեզվաբանական եզրերին առավել բնորոշ է բառիմաստի նորացումը կամ վերաիմաստավորումը, երբ նախկին իմաստների փոխարեն տերմինը ձեռք է բերում նոր իմաստներ: Ընդ որում նորի ձեռքբերումը չի ուղեկցվում հնի վերացմամբ:

Երրորդ խումբն են կազմում քերականական հայտնի եզրերի հնչյունական և բառակազմական նոր տարբերակները: Շատ հաճախ քերականագիտության մեջ նոր եզրեր կազմվում էին արդեն հայտնի եզրերի բառակազմական կառուցվածքի կամ հնչյունական կազմի որոշակի փոփոխմամբ: Այս խմբում ներառված են բոլոր այն եզրերը, որոնք քերականական ձեռագրերում նմանատիպ փոփոխություններ են կրել:

Յուրաքանչյուր քերականական եզր քննում ենք ըստ **պատկանելության** վերոհիշյալ խմբերի և ըստ խոսքիմասային պատկանելության, նաև տալիս ենք լատիներեն նախատիպը³:

Ձևաբանական տերմինները քերականության մյուս բնագավառների տերմինների համեմատ ձեռագրերում մեծ թիվ են կազմում. մեր ուսումնասիրության շրջանակներում դրանց քանակը շուրջ վեց տասնյակ է:

Անուն խոսքի մասը ինչպես ընդհանրապես, այնպես էլ մեր ձեռագրերում լեզվաքերականական քննությունների մեկնակետն է: Այն սահմանվում է որպես առարկայական գոյացություն նշանակող հոլովական բառ⁴: Քերական մեկնիչները անվան մեջ առաջին հերթին նկատի ունեին գոյականը, որը մեր քննած ձեռագրերում կոչվում է նաև *գոյաւոր անուն* (լատ. *substantivum nomen*). «անուն գոյաւոր է, որ իբրև ինքեամբ գոլով նշանակէ, որգոն՝ մարդ» (ՄՄ 2295, 54բ), «անուն գոյաւոր է, որ ըստ կերպի գոյողի ըստինքեան նշանակէ, որգոն՝ մարդ» (R. BC ms. 1941, 11բ), նույնն է՝ Ոսկան Երևանցու *գոյացական* կամ *ենթակայական անուն*⁵, տերմինը Կղեմես Գալանոսի *գոյական անուն*⁶ տերմինի բառակազմական նոր տարբերակն է:

³ Ձեռագրերում քերականական եզրերը ներկայացված են. ա. սահմանումով և օրինակներով, բ. առանց սահմանման, միայն օրինակներով, գ. առանց սահմանման և առանց օրինակի, պարզապես եզրի անվան հիշատակությամբ:

⁴ Գիլբարդյան Ն., 49:

⁵ Ոսկան Երևանցի, 7:

⁶ Կղեմես Գալանոս, 67:

Անուն խոսքի մասի մեջ էին մտնում նաև ածականը, թվականը և դերանվան մի քանի տեսակ:

Ձեռագրերում ածականը կոչվում էր *ածաւոր անուն* (լատ. *adiectivum nomen*). «անուն ածաւոր է, որ իբրև այլում վերայ կալով նշանակէ, հիգան՝ սպիտակ, մարդկային, ծիծաղական և այլն» (ՄՄ 2295, 54բ), «անուն ածաւոր է, որ ըստ կերպի յարողի այլոյ նշակէ, որզոն՝ սպիտակ և մարդկային և ծիծաղական» (R. BC ms. 1941, 11բ), Ոսկան Երևանցու⁷, Կղեմէս Գալանոսի⁸ *ածական անուն* տերմինների բառակազմական նոր տարբերակն է: Տարբերակում էին ածականի հետևյալ տեսակները. *ածական ածաւոր* (լատ. *accidentale adiectivum*)՝ բուն ածական. «ածաւոր երկու է... միւսն ածական, որ ձայնիւ և իրօք, է ածաւոր, որպէս՝ չար, սպիտակ, ժամանակաւոր, որզոն ասելով՝ հոգի է չար, մարմին է սպիտակ, է ժամանակաւոր» (ՄՄ 2295, 55ա), «երկատ է ածաւոր... միւսն ածական ձայնիւ և իրօք, որզոն՝ չար և իմաստուն հոգւոյ, հիպար՝ յորժամ ասեմ հոգի է չար կամ իմաստուն և մարդ է սպիտակ» (R. BC ms. 1941, 11բ), *գոյական ածաւոր* (լատ. *substantiale adiectivum*)՝ փոխանվանական կիրառությամբ գոյականի վերածված ածական. «ածաւոր երկու է. միւն գոյական, որ ձայնիւ միայն ածաւոր է, որզոն՝ բանական, մարդկային, որ է հոգոյ, որպէս՝ յորժամ ասեմ հոգի բանական կամ մարդկային» (ՄՄ 2295, 55ա), «բայց ածական կրկին է, ոմն գոյաւոր, որ ձայնիւ միայն է ածական, որպէս՝ բանական, աստուածային, մարդկային, որպէս ասելով՝ բանական հոգի, աստուածային անձն, մարդկային բնութիւն և այլն, այժմ բանական, աստուածային, մարդկային գոյաւորք են, զի գոյացութիւն և էութիւն իրաց են ըստ նշանակեալ իրի, բայց ըստ անուան և ըստ կերպի նշանակելոյն միայն ածական են և որպէս պատահումն երեւին» (ՄՄ 2286, 140ա), *գոյաւոր ածական* (լատ. *substantiale adiectivum*)՝ էական հատկանիշներ նշող ածական. «բայց ածական կրկին է, ոմն գոյաւոր, որ ձայնիւ միայն է ածական, որպէս՝ բանական, աստուածային, մարդկային, որպէս ասելով՝ բանական հոգի, աստուածային անձն, մարդկային բնութիւն և այլն, այժմ բանական, աստուածային, մարդկային գոյաւորք են, զի գոյացութիւն և էութիւն իրաց են ըստ նշանակեալ իրի, բայց ըստ անուան և ըստ կերպի նշանակելոյն միայն ածական են և որպէս պատահումն երեւին» (ՄՄ 2286, 140ա), *պատահական ածական* (լատ. *accidentale adiectivum*)՝ իրադրական հատկանիշներ նշող ածական. «բայց ածական կրկին է... ոմն պատահական ձայնիւ և իրաւք, որպէս՝ քանակական, երկայնական, կարճական, որակական, ժամանակական և այլք, որք ըստ անուանցն և նշանակութեանցն պատահումն են» (ՄՄ 2286, 140բ):

⁷ Ոսկան Երևանցի, 7:

⁸ Կղեմէս Գալանոս, 67:

Անունը բնորոշվում էր հետևյալ քերականական հատկանիշներով՝ «սերք», «թիւք», «տեսակ», «ձևք» և «հոլով»⁹: Ձեռագրերում վերոհիշյալ կարգերի հետ առնչվող մի քանի նորահայտ տերմին ունենք:

Թվի քերականական կարգի եզրերը հայերենում երկուսն էին՝ եզակի և հոգնակի թիվ. երբեմն առանձնացվում էր հունարենին և լատիներենին հատուկ՝ երկակի թիվ, որը երբեք հայերենում չունեցավ իր գործածությունը: Ձեռագրերից երկուսում ունենք հոգնակի թվի նոր անվանում՝ *բազմաւորակի թիւ* (լատ. *pluralis numerus*). «փոխանուանց ոմն եզակի..., ոմն բազմաւորակի, հիզան՝ մեք, դուք» (ՄՄ 2286, 147ա), «ոմն բազմաւորակի՝ որպէս մարդիկք..., իսկ մարդիկք բազմաւորակի է, զի բազմաւորականաբար առբերի, և այսոսիկ յամենայն լեզու նմանապէս» (ՄՄ 2295, 56ա), սա բառակազմական նոր տարբերակ է, քանի որ հոգնակի թիվը Կյուրեղ Ալեքսանդրացին անվանում էր *բազմաւոր*, Եզնիկ Կողբացին՝ *բազմաբար*, Թարգմանիչը՝ *բազմաւորական*, իսկ Անանունը՝ *բազմաւորաբար*¹⁰:

Անվան հատկանիշներից էր նաև հոլովի քերականական կարգը, որն արտահայտվում էր հոլովաձևերով: Ուսումնասիրության նյութ ձեռագրերում թեք հոլովների համար գործածում էին *թիւրականք* կամ *թիւր անկ* (լատ. *casus obliquus*) նորահայտ տերմինները. «բայց այլք հոլովքն ոչ ուղղականքն, այլ թիւրականք են, վասն զի ոչ էութեանց համար դրածք են, բայց վասն շրջակայութեանցն և այլ իրացն, որք էութեանց պատահին» (ՄՄ 2295, 53բ), «յանկից ոմն ուղիղ... ոմն թիւր, որ ոչ է վասն իրի անուանման, այլ վասն այնորիկ, որ ի վերայ իրի լինի և վեց են՝ սեռական, տրական, կրաւորական, կոչական, գործիական, առողական» (ՄՄ 2286, 143բ), «հոլովից այլ է ուղիղ... այլ է թիւր, զի ոչ է վասն իրի անուանակոչութեան, այլ վասն այլոյ, որ շրջագայ իրին և վեց են՝ սեռական, որ և ստացողական, տուողական, կրողական, կոչական, առնողական, գործիական» (R. BC ms. 1941, 16աբ):

Հոլովին վերաբերող երկու նորահայտ եզր ևս առանձնացրել ենք, որոնք հայտնի տերմինների այլ իմաստով, բառակազմական կամ հնչյունական տարբերակներն են.

Առողական կամ *առնողական հոլով* (լատ. *casus ablativus*)՝ բացառական հոլով. «առողական կոչեցաք, զի յայն յորմէ զիր ոմն առնումք, ի նա դնեմք, որպէս՝ ի քէն առի» (ՄՄ 2286, 144ա), «առնողական, զի ի նմանէ առնումք, որպէս՝ ի քեզնէ առի, ի Պետրոսէ առաքեցայ» (ՄՄ 2295, 58բ), «առնողական ասի յառնոյ, զի յորժամ յումեքէ զիր ինչ առնումք, գնա յայնպիսի հոլովի դնեմք, որզոն՝ ի քէն առի զթուլիթս այս, ի պապէն առաքեցայ» (R. BC ms. 1941, 17ա),

⁹ Վարդան Արեւելցի, 25:

¹⁰ ԼԲ, 41 և 43:

Կդենես Գալանոսն ունի *առողական հոլով* նույն իմաստի համար, ձեռագրում տերմինի հնչյունական նոր տարբերակն է¹¹, *կրաւորական հոլով* (լատ. *casus accusativus*)՝ հայցական հոլով. «կրաւորական ի կրելոյ աստցաք, զի զկրօղ դնեմք ի նմայ, որգոն՝ զքեզ ծեծեմ...», թէպէտ ի հայերէն լեզու կրաւորական նոյն է, որ ուղղական, միայն զայ առաջադրելով» (ՄՄ 2286, 144ա), այլ իմաստ է ձեռք բերել, քանի որ թարգմանչից հայտնի է *կրաւորական բայ*, Ոսկանից՝ *կրաւորական ձայն*, տերմինն ունի նաև *կրաւորական ածանց*, *կրաւորական խոնարհում*, *կրաւորական նախադասություն* գործածությունները¹²:

Ըստ Թրակացու՝ բայը ժամանակ, դեմք, թիվ ունեցող և չհոլովվող բառ է, որ «ներգործութիւն եւ կամ կիր յարկացոցէ»¹³: Իր հիմնական գործառութեամբ այն իբրև ստորոգյալ է բնորոշվում: Հայ քերականական մտքի պատմության մեջ շատերը առաջնություն էին տալիս անվանը, սակայն Ստեփանոս Սյունեցին, կարևորելով նախադասության մեջ բայի ունեցած էական դերը, այն է համարում առաջնահերթ¹⁴: Բայն ունի եղանակի, սեռի, դեմքի, ժամանակի, լծորդության քերականական հատկանիշներ: Ձեռագրերում գտել ենք բային առնչվող հետևյալ նորահայտ տերմինները. էական, գոյություն ունենալու իմաստ արտահայտող բայեր՝ *գոյական բայ*¹⁵ (լատ. *substantiale verbum*) կամ *էական բայ* (լատ. *existentiale verbum*). «բայ էական կամ գոյական լինի, որգոն՝ մարդ է բանական, այժմ է էութեանն հոսումն յոյժ նուրբ նշանակէ...» (ՄՄ 2286, 150ա), «էականք ասին այնք, որք զէութիւն իրին ցուցանեն, որգոն՝ ես եմ, դու ես, նա է, էի, էիր, էր, եղէց, եղիցիս, եղիցի» (ԻԲ A 81, 9աբ), օժանդակ բայը կոչում էին նաև *ծառայական բայ* (լատ. *servile verbum*). «բայից այլ դիմաւոր, այլ անդէմ, այլ ծառայական... ծառայականք դիմաւորացն և անդիմացն ծառայեն և ընդ դիմաւորօք դիմաւորականք են, որպէս դու պարտիս զապաշխարանս քաշել և ընդ անդիմօք անդէմք դառնան, որգոն՝ սիրել պարտէ» (ՄՄ 2295, 67բ):

Հայ քերականության պատմության մեջ դերբայ եզրի բովանդակությունը տարբեր կերպ է ըմբռնվել. Թրակացու հայ Թարգմանիչն այն կոչել է ընդունելություն՝ իբրև այդ բառերն ընդունում են անվան և բայի հատկությունները, անվան պես հոլովվում են, և բայի պես ունեն սեռ, եղանակ և ժամանակ: Հե-

¹¹ Նույն տեղում, 29:

¹² Նույն տեղում, 157–158: Տերմինը հետագայում Մ. Արեղյանի կողմից այլ իմաստ է ձեռք բերել՝ կրավորական միջաձանց, տե՛ս նույն տեղում:

¹³ **Աղոնց Ն.**, 22:

¹⁴ **Գիլբարդյան Ն.**, 38:

¹⁵ Հետագայում տերմինը հայտնի է նաև հետևյալ իմաստներով՝ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցին գործածել է գոյական ածանցական անուն, Մ. Սալլարյանը՝ գոյական դերանուն, Ա. Այտընյանը՝ գոյական դերբայ, Մ. Արեղյանը՝ գոյական խոսք, կան նաև գոյական անուն, գոյական վերադիր, գոյական որոշիչ տերմիններ, տե՛ս ԼԲ, 74–75:

տագայում Հովհաննես Կոստանդնուպոլսեցին այն անվանել է դերբայ՝ բային փոխարինող, իսկ արդեն ձեռագրերում հանդիպում ենք միևնույն տերմինի նոր անվանում հետևյալ բնութագրմամբ՝ *ընդունակ* (լատ. *participium*). «վասն ընդունակի, զոր ընդունելութիւն կոչեն. ընդունակ է մասն բանի հոլովական, որ գէութիւն ի միասին ընդ իւրում գործողութեան կամ զգործողութիւն ընդ էութեամբն, որում է գործողութիւն, նշանակէ..., ընդունակ կոչեցինք և ոչ ընդունելութիւն, զի ընդունելութիւն վերացեալ անուն է, որ ոչ զառնօղ, այլ զառնումն նշանակէ... ընդունակ ասի, վասն զի զանուան և զբայի նշանակութիւն ընդունի, որ է էութիւն և զգործողութիւն...» (ՄՄ 2295, 72բ-73ա), «ընդունակ է մասն բանի հոլովական, նշանակօղ գէութիւն ի միասին ընդ իւրում գործողութեան կամ զգործողութեան ըստ էութեան, որոյ է գործողութիւն... » (R. BC ms. 1941, 40ա):

Նախադրությունը միջնադարյան հայ մեկնիչների քերականական երկերում ընկալվել է որպես «սպասավոր» բառ կամ բառակազմական միջոց: Թրակացու Թարգմանիչն այն գործածում է «նախածանց», «վերջածանց», «նախդիր» և «նախադրություն» հասկացությունների համար¹⁶: Վերոհիշյալ խոսքի մասը բացի *նախադրությունից* հանդիպում է նաև *նախդիր* անվանումով¹⁷: Իսկ մեր ուսումնասիրության ընթացքում նույն խոսքի մասի համար ձեռագրերից երկուսում գտանք նորահայտ անվանում՝ *առանուն*. (լատ. *adnomen*), որը ստեղծվել է *առբայ* տերմինի համաբանությամբ. «վասն որոյ առբայ ընդ բայի միաւորի, իսկ նախդիր ընդ անուան, ապա ուրեմն ուղղապէս կոչեսցի առանուն, քան նախդիր, զի նախդիրն է ամենայն իրաց, որք յառաջադիրն կա՛մ ի բնութեան, կա՛մ ի բառից, բայց առ յանուան նախդնելն յատկութիւնն է այս մասինս բանի, զոր յայսմանէ նախդիր կոչեցին» (ՄՄ 2286, 156ա), «առբայ ընդ բայի միաբանի, իսկ նախդիր ընդ անուան, ուստի ևս ուղղագունաբար առանուն ասիւր, քան գնախդիր, զի նախդիրն է ամենայն իրաց, որք յառաջադիրն, թէ՛ ի բնութիւն, թէ՛ ի բառս, բայց անուան նախդիրն յատկութիւն է բանի մասիս այսու, զոր յայսմանէ կոչեմք գնախդիր, իսկ լաւագոյն առանուն» (ՄՄ 2295, 74բ):

Մակբայը չփոփոխվող, բայից առաջ կամ հետո դրվող խոսքի մաս է, որի մեջ հնում մտնում էին միջարկությունները կամ ձայնարկությունները, մակբայական (ցուցական և հարցական) դերանունները, եղանակական բառերն ու բառ-մասնիկները, որոնց թվում նաև այո, ոչ և նման պատասխանական բառերը¹⁸: Այս խոսքի մասը ևս տարբեր դարաշրջաններում և տարբեր քերա-

¹⁶ Մուրադյան Ա., 281:

¹⁷ Յովհաննէս Բոնեցի, 104:

¹⁸ Բարսեղյան Հ., 13:

կան-մեկնիչների կողմից տարբեր անվանումներով է հանդես եկել՝ *առքայ*, *կրկնառքայ*, *մակագդ*, *մակդիր քայի*, *վերնառքայ*:

Մակքայի տեսակների նորահայտ անվանումները, որոնք ցույց էին տալիս գործողության կատարման ժամանակը, որպիսությունը և այլ հատկանիշները, թվարկում ենք ստորև՝ *բացասելոյ առքայ* (լատ. *negandi adverbium*). «բացասելոյ են առքայք՝ ոչ, չէ, չ, մի, ոչ ուրեք» (ՄՄ 2295, 78բ), բառակազմական նոր տարբերակն է Կդեմես Գալանոսի *բացասական մակքայի*¹⁹, *երկմտելոյ առքայ* (լատ. *dubitandi adverbium*). «երկմտելոյ են՝ գուցէ» (ՄՄ 2295, 78բ), *ծանուցանելոյ առքայ* (լատ. *demonstrandi adverbium*). «ծանուցանելոյ են՝ ահա, ահաւասիկ, այսինքն է» (ՄՄ 2295, 78բ), *կարգի առքայ* (լատ. *ordinis adverbium*). «այլք են առքայք կարգի, որգոն՝ յառաջնապէս, երկրորդաբար, յետոյ, այսուհետև և այլն» (ՄՄ 2295, 78ա), «այլք են առքայք կարգի, որգոն՝ յառաջաբար, երկրորդապէս, երկրորդաբար և այլքն» (R. BC ms. 1941, 48ա), *կարգի և դրութեան առքայ* (լատ. *ordinis et dispositionis adverbium*). «այլք կարգի և դրութեան ի միասին, զի զգործողութիւնս կամ ժողովեն կամ տարածեն, ժողովելոյ առքայք են՝ հանդերձ, ի միասին, միատեղ, միապէս, միաբան, հասարակապէս, հանուրք, ընդհանուր, միաւորաբար և այլն, տարածելոյ են՝ առանձին, առանձնակի, որոշապէս, մէկ-մէկ, տեսակապէս, երկատ, երկուտակ, միքստ-միոջէ» (ՄՄ 2295, 78ա), *հարցանելոյ առքայ* (լատ. *interrogandi adverbium*). «հարցանելոյ են՝ է՛ր, ընդէ՛ր, զի՞, զիա՛րդ, վասն է՛ր» (ՄՄ 2295, 78բ), բառակազմական նոր տարբերակն է թարգմանչի *հարցական մակքայի* և Ոսկան Երևանցու *հարցական առքայի*²⁰, *մեծութեան առքայ* (լատ. *magnitudinis adverbium*). «այլք առքայք մեծութեան, հիբար՝ այնքան, որքան, այնչափ, որչափ, փոքր, փոքրագոյն, բազում, շատ, յոյժ, սակաւ, սակաւիկ մի, սակաւագոյն, առաւել, առաւելագոյն, աւել» (ՄՄ 2295, 78ա), «այլք առքայք մեծութեան, որգոն՝ այսչափ, այնչափ, սակաւ, սակաւագոյն, փոքր մի, շատ, բազում, յոյժ, առաւել, յաւետ, պակաս» (R. BC ms. 1941, 48ա), *նմանութեան առքայ* (լատ. *similitudinis adverbium*). «այլք են նմանութեան, որպէս՝ հիզան, հիբար, որպակ, որբար, որկէն, որգան, որգոն, հիկէն, որպէս, որգունակ, որք ևս հարցականք լինին» (ՄՄ 2295, 78ա), Կդեմես Գալանոսի *նմանական մակքայի* բառակազմական նոր տարբերակն է²¹, *ստորասելոյ առքայ* (լատ. *affirmandi adverbium*). «ստորասելոյ առքայք են՝ հա, հրամայեալ էս, այսպէս հէնց, ճշմարիտ, հաւաստեալ և այլն, իրաւ, ստուգիւ» (ՄՄ 2295, 78բ), բառակազմական նոր տարբերակն է Կդեմես Գալանոսի *ստորասական մակքայի*²², *տաղաւորական*

¹⁹ ԼԲ, 64:

²⁰ Նույն տեղում, 177–178:

²¹ Նույն տեղում, 234:

²² Նույն տեղում, 279:

առքայ (լատ. locale adverbium). «այլք առքայք տաղաւորականք, որք զգործ ի տեղուոջ նշանակեն, որպէս՝ ուր, աստ, անդ, ներս, արտաքս, ուր ուրեք, ոչ ուստեք, ոչ ուրուք և այլն» (ՄՄ 2295, 77բ), նույնական են Քոնեցու տեղական մակբայների հետ²³, *ցանկանայոյ առքայ* (լատ. optandi adverbium). «ցանկանալոյ են՝ օ, օշթէ, օթէ» (ՄՄ 2295, 78բ):

Ըստ հույն մեկնիչ Պրիսցիանի՝ հույները ձայնարկությունը չէին առանձնացնում իբրև խոսքի մաս, այլ մակբայների մեջ էին դնում, քանի որ ձայնարկությունը կա՛մ կցվում էր բային, կա՛մ նրա մեջ ենթադրվում էր բայի իմաստը²⁴, իսկ Գ. Ջահուկյանն էլ, նշելով հույների այս տեսակետը, ասում էր, որ սա յուրացնում էին նաև հայերը²⁵: Այս խոսքի մասը ձեռագրերից մեկում առանձնացվում է և նոր տերմինով կոչվում *անյայտ բան* (լատ. oratio confusa). «անյայտ բան է ցուցումն, որ ոչ ի բառս անջատի, այլ անկատար ձայնիւք և ոչ լաւ առբերածովքն, զհոգոյ կրմունս, զիմացմունս և զմայլութիւնս նշանակէ» (ՄՄ 2295, 83ա):

Առանձնացվում են ձայնարկության տասից ավելի տեսակ, որոնք արտահայտում են բարկություն, ժխտում, երկյուղ, կասկած, զարմանք, հրճվանք, հարցում, ցանկություն, ցավ, ուրախություն. դրանք հետևյալներն են՝ *անիծողի անյայտ բան* (լատ. imprecantis oratio confusa). «անիծողի, որպէս՝ մեռի՛ր, վա՛յ քեզ» (ՄՄ 2295, 84ա), *արգելողի անյայտ բան* (լատ. prohibentis oratio confusa). «արգելողի, որպէս՝ մի, քաւ լիցի» (ՄՄ 2295, 83բ), *բարկացողի անյայտ բան* (լատ. irascentis oratio confusa) (ՄՄ 2295, 83բ), *բացասողի անյայտ բան* (լատ. negantis oratio confusa). «բացասողի, որպէս՝ ոչ» (ՄՄ 2295, 84ա), *երկիւղածի անյայտ բան* (լատ. timentis oratio confusa) (ՄՄ 2295, 83բ), *երկմտողի անյայտ բան* (լատ. dubitantis oratio confusa). «երկմտողի, որպէս՝ միթէ, գուցէ» (ՄՄ 2295, 84ա), *զարմացողի անյայտ բան* (լատ. admirantis oratio confusa) (ՄՄ 2295, 84ա), բառակազմական նոր տարբերակն է Կղեմես Գալանոսի *զարմացական միջարկություն* տերմինի²⁶, *լացողի անյայտ բան* (լատ. lugentis oratio confusa). «լացողի, որպէս՝ վա՛յ» (ՄՄ 2295, 84ա), *ծիծաղողի անյայտ բան* (լատ. ridentis oratio confusa). «ծիծաղողի, որպէս՝ հա, հա-հա» (ՄՄ 2295, 84ա), *կոչողի անյայտ բան*²⁷ (լատ. vocantis oratio confusa). «կոչողի, որպէս՝ օ, ով, որք և պատասխանողի» (ՄՄ 2295, 84ա), *հարցողի անյայտ բան* (լատ. interrogantis oratio confusa). «հարցողի, որպէս՝ Է՛ր, ընդէ՛ր, վասն Է՛ր» (ՄՄ 2295, 84ա), *հրամայողի անյայտ բան* (լատ. imperantis oratio confusa) (ՄՄ 2295,

²³ Յովհաննէս Քոնեցի, 182:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Ջահուկյան Գ., 84:

²⁶ ԼԲ, 97:

²⁷ Հետազայում Մ. Չամչյանը գործածել է կոչական միջարկություն տերմինը, տե՛ս ԼԲ, 156:

83բ), *յորդորողի անյայտ բան* (լատ. *hortantis oratio confusa*) (ՄՄ 2295, 83բ), բառակազմական նոր տարբերակն է Հովհաննես Հովվի *հորդորական միջարկություն* տերմինի²⁸, *յուսացողի անյայտ բան* (լատ. *audentis oratio confusa*) (ՄՄ 2295, 83բ), *ստորասողի անյայտ բան* (լատ. *asserentis oratio confusa*). «ստորասողի, որպես՝ այսպես, այնպես» (ՄՄ 2295, 83բ), *ցանկացողի անյայտ բան* (լատ. *desiderantis oratio confusa*). «ցանկացողի, որպես՝ օթե» (ՄՄ 2295, 84ա), *ցառառողի անյայտ բան* (լատ. *dolentis oratio confusa*) (ՄՄ 2295, 84ա), *ցուցանողի անյայտ բան* (լատ. *demonstrantis oratio confusa*). «ցուցանողի, որպես՝ ահա, ահալասիկ» (ՄՄ 2295, 84ա), *ուրախացողի անյայտ բան* (լատ. *gaudentis oratio confusa*) (ՄՄ 2295, 84ա):

Շաղկապը Թարգմանիչը սահմանում է որպես բառ, որը շաղկապում է միտքը որոշ կարգով և պարզաբանում բացատրության մեջ եղած խզումը. «շաղկապ է բառ, որ շաղկապե գտրամախոհությունն ոճով եւ զմեկնութեանն փեռեկումնն յայտնէ»²⁹: Գրեթե բոլոր մեկնիչները շաղկապը սահմանում են որպես «զուգակապ»: Մեր ուսումնասիրությունն ուշագրավ է այն տեսանկյունից, որ ձեռագրերից դուրս ենք բերել շաղկապների նոր տեսակների և արդեն հայտնի տեսակների նոր անվանումներ՝ *անջատաւոր շաղկապ* (լատ. *disiunctiva coniunctio*). «անջատաւոր է, որ գրառս և ոչ զիրս կապէ կամ ըստ ձայնի միաւորէ և ըստ իրի բաժանէ և են՝ կամ, թէ, որպէս՝ դու ես կա՛մ մարդ, կա՛մ անասուն, և կա՛մ կարդայ, կա՛մ աշխատիր, և կա՛մ ես չար եմ, կա՛մ դու չար ես...» (ՄՄ 2295, 81ա), բառակազմական նոր տարբերակն է թարգմանչի *անջատական շաղկապի*³⁰, *բանաւոր շաղկապ* (լատ. *rationalis coniunctio*). «բանաւոր շաղկապ է, որ զասացեալ ընդ պատճառիւ ասացելոյն միացուցանէ. որգոն՝ դու իմաստուն ես, քանզի զփիլիսոփայութիւն կարդացեր [ես], և են բանաւորքն՝ զի, քանզի, վասն որոյ, վասն այսորիկ» (ՄՄ 2295, 81բ), *ընդդիմաւոր շաղկապ* (լատ. *adversativa coniunctio*). «ընդդիմաւոր է, որ զիրս կամ զգործս միացուցանէ, բայց ընդ այլայլութեամբ, որգոն՝ դու լաւ ես, բայց ոչ յամենայնի, և Պետրոս իմաստուն, այլ Յոհաննէսէ անիմաստ, ընդդիմաւորքն են՝ բայց, այլ, իսկ, արդ, սակայն, թէպէտ և ամենեքին, որք հակառակելով միաւորեն» (ՄՄ 2295, 81ա), բառակազմական նոր տարբերակն է թարգմանչի *ընդդիմակ* և Կղեմես Գալանոսի *ընդդիմական շաղկապների*³¹, *ժամանակաւոր շաղկապ* (լատ. *temporalis coniunctio*). «ժամանակաւոր շաղկապ է, որ զիրս և զգործս ի մի ժամանակ միացուցանէ, որպէս՝ յորժամ վարդապետ ուսուցանէ, աշակերտք զունկնդրեն: Են ժամանակաւորքն՝ յորժամ, երբ, երբ որ, յայնժամ, յե-

²⁸ Նույն տեղում, 196:

²⁹ Ն. Աղոնց, 35:

³⁰ ԼԲ, 19:

³¹ Նույն տեղում, 104:

տոյ, մինչև, մինչդեռ, նոյն ժամայն» (ՄՄ 2295, 82ա), բառակազմական նոր տարրերակն է Ոսկան Երևանցու *Ժամանակական շաղկապի*³², *լուծական շաղկապ* (լատ. *expositiva coniunctio*). «լուծական է, որ անյայտ իրին զայտնութիւն միացուցանէ, հիգան՝ մարդ է ծիծաղական, այսինքն է՝ ծիծաղել կարող է, յորժամ կամենայ, են լուծականքն՝ այսինքն է, որ այսպէս է գրութիւն» (ՄՄ 2295, 82ա), *կապաւոր շաղկապ* (լատ. *copulativa coniunctio*). «կապաւոր շաղկապ է, որ զիրս ի մի գործ կամ զիրս և զգործս ամեննին միաւորէ և են կապաւորքն՝ և, ևս, զի, յորժամ, իբրև, որք ստորադասականի ծառայեն» (ՄՄ 2295, 80բ), *համեմատաւոր շաղկապ*³³ (լատ. *comparativa coniunctio*). «համեմատաւոր շաղկապ է, որ ընդ նմանութեամբ զիրս պարզաբար կամ ընդ գործողութիւնս ի միասին առ յինքեանս միացուցանէ հաւասարելով կամ աւելցուցանելով, որգոն՝ որպէս Պետրոս է իմաստուն, այնպէս Պօղոս է անիմաստ, կամ Պետրոս է իմաստուն որպէս սուրբ, կամ այնքան իմաստուն է, որքան սուրբ, կամ առաւել իմաստուն է, քան զսուրբ, կամ առաւել իմաստուն է, քան զՊօղոս, են համեմատաւորքն՝ որպէս, այսպէս, այնպէս, առաւել քանզ, փոքր քանզ, այնքան, որքան, այնչափ, որչափ, յոյժքան» (ՄՄ 2295, 81ա), *որոշաւոր շաղկապ* (լատ. *exceptiva coniunctio*). «որոշաւոր է, որ յասացելոյ զիր ինչ որոշելով գործեցեալն ընդ նմին, յորմէ որոշեցաւ, միաւորէ, որպէս՝ ամենայն մարդ է սուտ, եթէ ոչ Յիսուս Քրիստոս, են որոշաւորքն՝ եթէ ոչ, բայց ոչ, այլ ոչ, բայց միայն» (ՄՄ 2295, 82ա), *տաղաւարական շաղկապ* (լատ. *localis coniunctio*). «տաղաւարական է, որ զգործողութիւնս կամ զիրս որպէս ի մի տեղ միացեալսն նշանակէ, որգոն՝ ուր գտանիցեմ զքեզ, անտ և դատիցեմ, են տաղաւարականքն՝ ուր, ուստի, յուր, մինչ ուր և այլք, որք միացուցանել կարօղ են» (ՄՄ 2295, 82ա), *տարակուսաւոր շաղկապ* (լատ. *conditionalis coniunctio*). «տարակուսաւոր է, որ զմիաւորութիւնն իւր ի ներդրութենէ գործէ, որպէս՝ եթէ արեգակն է ի վերայ երկրի, ցերեկ է, և են տարակուսաւորքն՝ եթէ, եթէ ոչ» (ՄՄ 2295, 81ա), Թարգմանիչն ունի *տարակուսական շաղկապ*³⁴, որի համեմատ մեր տերմինը բառակազմական նոր տարրերակ է:

Այսպիսով, ԺԷ դարի երեք ձեռագրից դուրս ենք հանել հիսունվեց նորահայտ տերմին, որոնք ընդգրկում են միջնադարյան ըմբռնմամբ գրեթե բոլոր խոսքի մասերը: Առանձնացրել ենք հայ տերմինաբանության մեջ հանդիպող նորահայտ տերմինների երեք խումբ՝ քերականագիտության մեջ առաջին անգամ գործածվող եզրեր, տարրեր քերականների կողմից արդեն գործածված

³² Նոյն տեղում, 112–113, կա նաև ժամանակի, ժամանակային տերմինները միևնույն իմաստի համար:

³³ Հետազայում Մ. Չամչյանն ունի համեմատական շաղկապ տերմինը, տե՛ս ԼԲ, 167:

³⁴ Նոյն տեղում, 290:

հայտնի եզրերի նոր իմաստով կիրառություններն են, և հնչյունական կամ բառակազմական նոր տարրերակներ:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ադոնց Ն., Երկեր, հտ. Գ., Երևան, 2008:

Առաքել Միսնեցի, Յաղագս քերականության համառատ լուծմունք, Լոս Անճելոս, 1982:

Բարսեղյան Հ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Երևան, 1973:

Դիլբարյան Ն., Անվան ըմբռնումը հայ լեզվաբանության մեջ, Երևան, 2000:

Տասայի Նչեցի, Վերլուծություն քերականության, Երևան, 1966:

Կղեմես Գալանոս, Քերականական եւ տրամաբանական ներածություն առ յիմաստասիրությունն շահելոյ, Հռոմ, 1645:

Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառարան, Երևան, 2010:

Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Է, Երևան, 2012:

Մուրադյան Ա., Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971:

Յովհաննէս Երզնկացի, Հաւաքումն մեկնության քերականի, Լոս Անճելլոս, 1983:

Յովհաննէս Ծործորեցի, Համառատ տեսություն քերականին, Լոս Անճելլոս, 1984:

Յովհաննէս Քոնեցի, Յաղագս քերականի, Երևան, 1977:

Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի (ՆՀԲ), հ. Ա, Վենետիկ, 1836:

Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Բ, Վենետիկ, 1837:

Ոսկան Երեւանցի, Քերականության գիրք համառօտիւք ծայրաքաղ արարեալ յաղագս մանկանց և նորավարժից կրթության ի տառս մատենից և ի գիտութիւնս մասանց բանի ըստ քերթութեան արհեստի, Ամստերդամ, 1666:

Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարապետյան Թ., Լեզվաբանական բառարան (ԼԲ), Երևան, 1975:

Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V–XV դդ.), Երևան, 1954:

Վարդան Արեւելցի, Մեկնություն քերականի, Երևան, 1972:

Catalogo dei manoscritti Armeni delle biblioteche d'Italia, a cura di Gabriella Uluhogian, Roma 2010:

TATEVIK MANUKYAN

Mashtots Institute of Ancient Manuscripts – Matenadaran

t.manukyan@matenadaran.am

NEW-FOUND MORPHOLOGICAL TERMS IN 17TH CENTURY ARMENIAN MANUSCRIPTS

SUMMARY

To begin the research we started with examining the manuscript funds of the Matenadaran named after Mesrop Mashtots in Yerevan and Kazanatsentse library in Rome. From the rich treasures of the Matenadaran manuscripts we chose two manuscripts and one more from the Kazanatsentse library collection. The study was conducted within the framework of these three (MM 2286, 2295 and 2295, R. BC ms. 1941) manuscripts. In the process of selection we were guided by the following principles: first of all the selected manuscripts should include grammar works and be dated to the 17th century. Applying the principle of elimination, we managed to allocate originals, which had not been investigated from the point of view of the use of morphological terms.

Thus, the focus of our investigation is the use of the morphological terms in the above-mentioned manuscripts and the degree of their novelty. We have divided them into the following groups:

- Grammatical terms, which are not recorded in linguistic and terminological dictionaries, are entered into scientific circulation for the first time, thereby conditionally named new.
- Well-known grammatical terms are applied in a different sense. Change of the meaning in language units is a historical phenomenon, and in the process of the development of the Armenian language changes have occurred in various ways. The modification or acquisition of a new meaning, when, instead of the old meaning the term gets a new one, is peculiar to linguistic terms. However, the acquisition of the new meaning is not accompanied with the loss of the old one.
- The third group includes phonetic and lexical variants of already established grammatical terms. These are coined due to changes either in the structure or the sound-envelope of the terminological element.

In the present article we investigate each term in its appropriate group, identify the part of speech it belongs to, as well as introduce the Latin version of the word. In comparison with other areas of grammar the number of morphological terms in the manuscripts is rather large – about six dozens in the manuscripts under investigation.

As the researcher shows this amount of new-found Armenian morphological terms can be classified in three groups: terms which have occurred in the manuscripts for the first time; the semantically changed variants of the known terms; terms which have undergone phonological or structural changes.

ТАТЕВИК МАНУКЯН

Институт древних рукописей имени Маштоца – Матенадаран

t.manukyan@matenadaran.am

НОВОНАЙДЕННЫЕ МОРФОЛОГИЧЕСКИЕ ТЕРМИНЫ В АРМЯНСКИХ РУКОПИСЯХ 17-ГО ВЕКА

РЕЗЮМЕ

Приступая к исследованию мы рассмотрели рукописные фонды Матенадарана им. М. Маштоца и библиотеки Казанатенсе в Риме. Исследование было проведено на основании трёх рукописей: двух – из фонда Матенадарана (ММ 2286 и 2295) и одной – из библиотеки Казанатенсе (R. BC ms. 1941). Мы руководствовались следующими принципами: в первую очередь были выбраны рукописи, включающие в себя грамматические труды и датированные 17-ым веком, затем методом исключения были выделены неисследованные с точки зрения стилистики оригиналы.

Основным материалом исследования являются, грамматические термины выписанные из рукописей, относящихся к частям речи; по степени новшества мы раздели их на следующие группы:

- К первой группе относятся грамматические термины, не вошедшие в терминологические словари и, будучи введёнными в научный оборот впервые, условно названы новыми.
- Ко второй группе отнесены известные грамматические термины применённые в ином смысле. Изменение смысла языковых единиц является историческим явлением, и в процессе развития армянского языка выявлялось по-разному. Лингвистическим терминам более свойственна модификация смысла или приобретение нового смысла, когда вместо предыдущих смыслов термин приобретает новые значения. При этом, приобретение нового смысла не сопровождается потерей старого.
- Третью группу составляют звуковые и словообразовательные варианты известных грамматических терминов. Очень часто в грамматике новые термины составляются с помощью изменения структуры или звукового состава уже известных терминов. В эту группу включены термины, претерпевшие вышеуказанные изменения.

В статье каждый термин исследуется по принадлежности к той или иной группе и по принадлежности к части речи. Приводится также латинский вариант термина. По сравнению с другими областями грамматики наиболее

многочисленны стилистические термины. В нашем исследовании их количество составляет около шести десятков.

Таким образом, из трех рукописей 17-ого века мы выписали 56 новых терминов, которые включают в себя все существующие части речи того времени. А в терминологии армянского языка мы выделили три группы: 1. термины, использованные в грамматике впервые, 2. известные термины, которые приобрели новые значения, 3. новые виды звуков или словообразования. В арменоведении многие ученые, занимавшиеся первоисточниками, касающимися лингвистических вопросов, рассматривали и термины; однако, основой нашей статьи являются ранее не исследованные и не опубликованные термины в тех же источниках. Таким образом, настоящая статья является полноценным исследованием для восполнения данного пробела.